ԱՐՄԱՎԻՐԻ Ռ. ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ազգային արժեհամակարգի ձևավորումը Դ.Վարուժանի

«Հարճը» պոեմի հերոսների բնութագրմամբ

Ուսումնական հաստատություն՝ Արմավիրի մարզի «Եղեգնուտի միջնակարգ

դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Ավետիսյան

Վերապատրաստող՝ Հասմիկ Պողոսյան

ԱՐՄԱՎԻՐ 2023

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ժողովուրդ քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու իր անձնագիրն ունի: Հայ ժողովրդի համար այդ անձնագիրը նրա հոգևոր-մշակութային անսպառ հարստությունն է, որի մեջ առանձնակի արժեք ունի հայ գրականությունը՝ իր ազգային դիմանկարով և համամարդկային գաղափարներով:

Ամեն մի պատմաքաղաքական ժամանակաշրջան տվյալ ժամանակի համար կարևոր հիմնախնդիրների լուծման անհրաժեշտություն է ակնկալել գրականությունից և հայ գրականության պատմությունը վկայում է, որ կապը ժողովրդի ու գրականության միջև միշտ էլ անխաթար է եղել:

Գրականության միջոցով սովորողները հաղորդակից են դառնում այն գաղափարին, որտեղ արտացոլվում է կյանքն իր բազմաբովանդակ տարրերով, որի կենտրոնական դեմքը մարդն է:

Ավագ դպրոցում հայոց լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշչում կարևորվում է անհատի և քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման խնդիրը:

Գրականության մեթոդների և հնարների մասին խոսելուց առաջ պետք է նշել, որ այսօր կարևորվում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև գրագետ, կապակցված խոսք մշակելու կարողությունը, հետազոտական ինքնուրույն աշխատանքի միջոցով ստեղծագործական երևակայության զարգացումը:

Մեթոդների ընտրությունը կատարում է ուսուցիչը՝ ելնելով նպատակադրումից: Այսօր առավել ևս ավագ դպրոցում դասավանդող ուսուցչի առջև դրված է հայեցի կրթության և դաստիարակության, ազգապահպանման, ազգային արժանապատվության բարձրացման խնդիրը:

Սույն հետազոտական աշխատանքում կանդրադառնանք Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի պատմական հիմքերին, կերպարների

առանձնահատկություններին, սովորողների շրջանում ազգային արժեհամակարգի ձևավորման կարևորությանը, կներկայացվեն օրինակելի դասի պլաններ:

Աշխատանքի նպատակն է.

- Ներկայացնել Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի կապը պատմական աղբյուրի և հիմքերի հետ՝ հաղորդակից դարձնելով տվյալ պատմական ժամանակաշրջանի գաղափարական բովանդակությանը:
- Ցուցադրել, թե ինչպես կարող է «Հարճը» պոեմը նպաստել ազգային արժեհամակարգի ձևավորմանը՝ կերպարների ներկայացման միջոցով ցուցադրելով բարոյական բարձր հատկանիշներ:
- Սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին:

Պոեմի ուսուցումն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

- նախնիների հոգևոր մշակույթի գնահատում,
- գրական երկի միջոցով ինչպես ինքնաճանաչման, այնպես էլ դիմացինին հասկանալու, արժևորելու ձգտում, նրբանկատություն, նրբազգացողություն,
- հարգանք ուրիշի զգացմունքների նկատմամբ,
- ինքնադաստիարակման ձգտում՝ հերոսների կերպարների միջոցով,
- գրական – գեղարվեստական ճաշակ,
- գրական հերոսների օրինակով սովորողների մեջ դաստիարակել բարոյական բարձր հատկանիշներ՝ ազնվություն, բարություն, վեհանձնություն, պատվախնդրություն, պատասխանատվության զգացում, քաջություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյականային այլ հատկանիշներ:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ԱՂԲՅՈՒՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Դանիել Վարուժանը հայ դասական գրականության ամենամեծ ներկայացուցիչներից է: Գրողին վիճակվեց ստեղծագործել պատմական ծանր ու բարդ ժամանակաշրջանում: Հայրենիքում նա տեսավ խոշտանգվող ժողովրդին, հանդիպեց սգակիր ծերունիների ու կանանց, լսեց որբացած մանուկների լացը: Նրան խորապես հուզեց պանդուխտի տխուր ճակատագիրը, թշվառ, անօգնական մարդու ցավն ու տառապանքը: Իսկ ապրելով Եվրոպայում, բանաստեղծը համոզվեց, որ տառապում է ոչ միայն հայը, այլև մարդն ընդհանրապես, որ ազգային լծից բացի կա սոցիալական կեղեքում, կյանքի այլասերում, բզկտվող հասարակություն:

Եվ Վարուժանի «մաքուր ու ջինջ» ձայնը, Եղիշե Չարենցի արտահայտությամբ, հորդաց «ամպրոպի որոտի պես թափով»: Նա ծառացավ «վայրագ Ոգու» դեմ, հակադրվեց բուրժուական կյանքի եսամոլությանն ու կեղծիքին, երազեց ազնիվ, արդար ու ներդաշնակ կյանք՝ մարդկայնորեն գեղեցիկն ու լավը գտնելով աշխատավորական շրջաններում, բանվորական միջավայրում և գեղջուկի խաղաղ առօրյայում:

Խորապես ուսումնասիրելով քաղաքական, սոցիալական, փիլիսոփայական գիտությունները, յուրացնելով հայ և համաշխարհային դասական գրականության ավանդույթները՝ Վարուժանը մեր բանաստեղծությունը հասցրեց համաեվրոպական մակարդակի: «Վարուժանը պատկանում է նույնքան Արևմուտքին, որքան Հայաստանին»,- իրավացիորեն գրել է ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին:

Ստեղծագործելով հազիվ մեկուկես տասնամյակ՝ Վարուժանը կարողացավ իր հուժկու և բազմակողմանի տաղանդով արձագանքել ժամանակի սուր ու ցավոտ խնդիրներին: Նա մշտապես փոխում էր իր «քնարի լարերը», քնարական մեղմությամբ հեղինակած երգերի հետ հեղինակելով ցասումնալից, խորհրդապաշտական, իրապաշտ բանաստեղծություններ:

Կենդանության օրոք բանաստեղծը հրատարակեց «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» ժողովածուները, իսկ նրա վերջին մատյանը՝ «Հացին երգը», լույս տեսավ հետմահու:

«Հեթանոս երգեր»-ի միտքը բանաստեղծին զբաղեցրել է դեռևս 1908-ին: Արշակ Չոպանյանին գրած նամակում Վարուժանը գրում է. «Հեթանոս կյանքը օրեօր կգրավե զիս. եթե այսօր կարելի ըլլար կրոնքս կփոխեի և սիրով կընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը» («Նամականի», էջ 131): 1910թ.-ին Վարուժանն արդեն վերջնականապես որոշում է նոր շարքն անվանել «Հեթանոս երգեր»:

Վարուժանը «Հեթանոս երգեր» ժողովածուի մեջ արտահայտեց «ցավն հաճույքին և հաճույքներն ցավին» բանաձևը: Ըստ նրա՝ քրիստոնեական ետնադարը աղավաղել է մարդկային էությունը, մանրացրել է մարդուն, «արգելված գոտի» է դարձել լիարժեք վայելքի, հոգեկան ազատության համար: Իսկ այդ ամենը նա տեսնում էր պատմության հեթանոսական հատվածում և միևնույն նվիրումով վերադառնում դեպի ասպետական դարերը: «Դարերու կյանքը կը երգեմ, հանուն հաճույքի և տառապանքի գեղեցկության»: Վիմագիր այս խոսքը «Հեթանոս երգեր»-ի բնաբանն է:

«Հաճույքի և տառապանքի» համատեղ գոյության դավանանքը առավել ուժգին և առավել ընդգծված արտահայտվել է «Հարճը» պոեմի մեջ: (Ս. Աղաբաբյան «Դասականներ և ժամանակակիցներ», էջ 50):

1910թ.-ի սեպտեմբերին Վարուժանը Սեբաստիայից Նշան Տեր-Ստեփանյանին հղած նամակում գրում է. «Այս տարի թեպետև գրական շատ կտորներ չարտադրեցի՝ սակայն գրած եմ ուժեղ դյուցազնավեպ մը պատմական դրվագի մը վրա՝ որ հուսամ թե պիտի գնահատվի» («Նամականի», էջ 186):

Քնարական մի շեղումով Վարուժանը բացատրում է քնարաէպիկական պոեմի ստեղծման դրդապատճառը: Նա ատելությամբ է խոսում քաղքենի կյանքի մասին, ուր գիշերային խավարի ու լռության մեջ ոճիրներ են նյութվում: Այդ աշխարհում մի գավաթ գարեջրով աճուրդի է հանվում սերը: Հենց այդ չնչին մարդկանց

քաղքենի իրականության, մանր ու ծախու բարքերին որպես հակադրություն՝ նա ստեղծում է հզոր մարդկանց զգացումների ու կրքերի պատմությունը:

Գործնական համատեքստ

Խորենացու «Հայոց պատմության» մեջ Վարուժանը գտավ քաջության ու ասպետական արարքի մասին պատմող սիրային մի արկած, որն անավարտ էր, քանզի այստեղ պատմիչը վերջակետ է դնում՝ ասելով.«...աւելորդ եղև մեզ պատմել գնահատկութիւն առնն ցանկասիրի» (Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս,1913, էջ 196)

Պատմահոր պատումն ընդհատվում է լարված մի կետում և շարունակվում բանաստեղծի գրչի տակ՝որպես ռոմանտիկական մի ողբերգություն:

Երկու անձերի հանդիպումը, պահի դրամատիզմը դրամայի զսպանակն է և նյութ է տվել բանաստեղծի երևակայությանն ու ատաղձ հանդիսացել «Հարճը» պոեմի համար:

Խորենացին գրում է. «Բագրատունյաց ցեղից կար մի ոմն Տրդատ, քաջ Սմբատի Սմբատուհի դստեր որդին, մի սրտոտ և ուժեղ մարդ, կարճ հասակով և տգեղ կերպարանքով: Նրան Տիրան թագավորը իրեն փեսայացրեց՝ իր Երանյակ դստերը նրան կնության տալով: Կինը չսիրեց իր ամուսին Տրդատին, արհամարհում էր նրան, հոնքերը կիտում, շարունակ իրեն վայ տալիս, որ իր նման չքնաղ ու ազնվական կինն ստիպված է մի տգեղ ու հասարակ ծագումից մարդու հետ ապրել: Սրա վրա զայրանալով՝ Տրդատը մի օր սաստիկ ծեծում է նրան, և կտրելով «զդեղյան հերսն և զվարսիցն փետյալ զխոպոպիս», հրամայում է քաշեքաշ դուրս գցել սենյակից: Իսկ ինքն ապստամբելով գնաց Մարաստանի կողմերը: Երբ նա հասավ Սյունաց աշխարհը, այստեղ նրան հասավ Տիրանի մահվան լուրը, ուստի այդտեղ էլ մնաց (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ. էջ 150): -Խորենացին շարունակում է.- «Մի օր Սյունաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց: Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ Նազենիկ անունով հարճին՝ «զի հույժ գեղցիկ էր, և երգեր ձեռամբ»: Տրդատն այդ կնոջն իրեն

քաշելով, սեղանակիցների առաջ գգվում, համբուրում էր նրան սիրահարված անզուսպ երիտասարդի նման:

Բակուրը «խանդելով վեր կացավ, որ կնոջը նրա ձեռքից խլի», բայց Տրդատը ոտքի ելնելով ծաղկամանն իբրև զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց: Կարծես մի նոր Ոդիսևս էր առաջ եկել, որ կոտորում է Պենելոպեի սիրահարներին: Այսպես իր կացարան հասնելով՝ իսկույն ձի հեծավ և հարճի հետ միասին Սպեր գնաց(Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ. էջ 151)»:

Խորենացին գովեստով է խոսում Տրդատի ուժի և քաջության մասին, բայց չի խրախուսում հյուրին անվայել նրա արարքը՝ վերագրելով այն հասարակ ցանկասիրության: «Բայց իսկապես ավելորդ էր պատմել այդ ցանկասեր մարդու քաջագործությունը»,- Իր խոսքն ավարտում է Պատմահայրը:

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ավագ դպրոցում հայոց լեզվի և գրականության դասընթացը բուն լեզվական ու գրականագիտական գիտելիքներ տալուց բացի նպաստում է անհատի հոգևոր և մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը, գրական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանում արժեքներ՝ մարդասիրություն, ընկերասիրություն, բարություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, գեղեցիկը տեսնելու և գնահատելու հատկանիշներ:

Նրանք անցնում են գրական երկի ուսուցման մի նոր ձևի՝ վերլուծության, բնութագրման, քննարկման, որի ընթացքում զարգացվում և ընդլայնվում է նրանց վերլուծական միտքը: Քննարկումներին ակտիվորեն մասնակցելու և սեփական ըմբռնումներն արտահայտելու տեսակետը սովորողին հնարավորություն է ընձեռում բազմակողմանիորեն բնութագրել գրական հերոսներին, գտնել նրանց ընդհանրություններն ու տարբերությունները, հոգեբանորեն բացատրել արարքների դրդապատճառները և շարժառիթը:

Միջառարկայական կապերի ստեղծմամբ ինտեգրված ուսուցումը և տարբեր կիրառումն այս պարագայում շատ արդյունավետ է: Այն իրականացնում է երկու կարևոր խնդիր.

- գրական ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալում,
- ժողովրդի պատմության ճանաչողական և պատմության ու գրականության փոխկապակցվածության ըմբռնում:

Արդյունքում խթանվում է աշակերտների հետաքրքրությունը գրական երկի նկատմամբ, ձևավորվում է ազգային բարձր արժանապատվություն, համամարդկային մշակույթի մեջ իր արժանի տեղի ըմբռնում և ստեղծագործական մոտեցում կենսական խնդիրներին:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ պոեմն ուսուցանելիս պետք է լայնորեն օգտագործել միջառարկայական կապեր, ինտերակտիվ մեթոդներ, որոնք կխթանեն աշակերտի ակտիվ մասնակցությունը և կապահովեն ուսուցման արդյունավետությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Դաս 1. թեմա՝ «Հարճը» պոեմի աղբյուրը, կառուցվածքը, պատմական ժամանակաշրջանը, գաղափարական բովանդակությունը:

Դաս 2. թեմա՝ «Հարճը» պոեմի կերպարները:

Դաս 3. թեմա՝ «Հարճը» պոեմի ամփոփումը:

Դաս 1. «Հարճը» պոեմի աղբյուրը, կառուցվածքը, պատմական ժամանակաշրջանը, գաղափարական բովանդակությունը

Դասի նպատակն է.

- Ծանոթանա «Հարճը» պոեմի պատմական հիմքին:
- Ընկալի Վարուժանի՝ հեթանոսական ժամանակաշրջանին դիմելու դրդապատճառները:
- Ներկայացնի հեթանոսական միջավայրը, ուժի, զորության, ասպետականության:

Դասի վերջնարդյունքում սովորողը.

- Կներկայացնի պոեմի պատմական ժամանակաշրջանը, կհամադրի պոեմի բովանդակությունը պատմական աղբյուրի հետ:
- Կներկայացնի Վարուժանի քնարական շեղումները պատմական հիմքից:
- Կներկայացնի հեթանոսական - ասպետական դարերին բնորոշ ուժի, գեղեցկության, ոգու, վայելքի մեծարանքը:

<u>Քայլ 1.</u> Դասի քննարկումը, հարցերի բարձրաձայնումն իրականացվել է ԳՈՒՍ մեթոդի կիրառությամբ.

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Ի՞նչ է հեթանոսական գրական շարժումը	Ի՞նչ ընդհանրություններ ունի պոեմը պատմական աղբյուրի հետ, ինչ շեղումներ կան	Համադրեցի պոեմի բովանդակությունը պատմական աղբյուրի հետ
«Հարճը» պոեմը զետեղված է «Հեթանոս երգեր» ժողովածուում	Ինչու՞ է Վարուժանն իր գեղագիտական սկզբունքները պատկերելու համար գնում այդքան հեռավոր անցյալ	Առանձնացրի ասպետական ժամանակաշրջանի մարդուն բնորոշ կարևորագույն հատկանիշները

<u>Քայլ 2</u> Պոեմից դուրս գրել հեթանոսական - ասպետական դարերին բնորոշ Ուժի, Գեղեցկության, Ոգու, վայելքի մեծարանքը փառաբանող հատվածներ

Հեթանոսական միջավայրի պատկերումը	Ուժի, Զորության նկարագիրը	Ասպետականության փառաբանությունը
Պալատին մեջ ծով մը կա ծիծաղներու և լույսի՝ որ	Սեղանին շուրջը արդեն Մեծամեծերն հայկազուն	Փառք ձեզի միշտ, ով դարեր ասպետական

Դաս 2. «Հարճը» պոեմի կերպարները

Դասի նպատակն է.

- խթանել սովորողների վերլուծական-քննական մտածողությունը,
- զարգացնել կերպարների միջև համեմատական զուգահեռներ տանելու հմտությունը:

Դասի վերջնարդյունքում սովորողը.

- կարտահայտի ինքնուրույն դատողություններ հարցերի շուրջ,
- կերպարի հանդեպ կձևավորի անհատական վերաբերմունք:

Քայլ 1 Պոեմից դուրս գրել Տրդատին և Նազենիկին բնութագրող հատվածներ, քանի որ այդ կերպարները Վարուժանի առաջ քաշած գաղափարների կրողներն են, ուժն ու գեղեցկությունը մարմնավորողները:

Կին մը իրեն կը նայեր, կը զգար սըրտին մեջ շըմոր.
Իր կազմին վրա կ'հիանար, առնագեղ, խրոխտ ու հըզոր,
Հըզոր՝ վիզովն առյուծի և բիբերով աստղահեռ՝

-Այս կինն ինձ տուր, եթե չէ օրեն՝ որ մենք ընենք վեճ.
Արշալույսին թող մեկնիմ արշալույսն այս գրկիս մեջ»:

Ձախ թևով հարճը գըրկեց, հետո–«Հա՛, հա՛,– քըրքըջաց,–
Էգ վագրին հոտն ըմբոշխնել արու վագրի՞ն է տըրված»:

<u>Քայլ 2.</u> Համեմատություններ և հակադրություններ մեթոդով բնութագրել Տրդատին ըստ

Խորենացու և ըստ Վարուժանի՝ կիրառեով Վեննի դիագրամ



Հարցադրումների և հիմնավորումների միջոցով ներկայացնել կերպարների բնութագիրը

Հարց. Ինչու՞ է Վարուժանն անտեսում Տրդատ Բագրատունու արտաքինի խորենացիական նկարագրությունը:

Հիմնավորում. Այդ փոփոխությունն անհրաժեշտ էր բանաստեղծին՝ իր մտահղացումն իրականացնելու համար: Տրդատի՝ հեթանոսական դարի ասպետի կերպարի միջոցով Վարուժանը քննադատում է 20-րդ դարի մարդկային կեղծ հարաբերությունները:

Տրդատի ամփոփ նկարագիրը. Որքա՞ն դաժան ու անզիջում է Տրդատը Բակուրի նկատմամբ, այնքան քնքուշ է այդ ապառաժ մարդն իր սիրած կնոջ՝ Նազենիկի նկատմամբ: Ուժն ու քնքշությունը, ըմբոստ ոգին ու սերը միախառնված են այդ քաջարի տղամարդու հոգում:

— Գլուխդ, զգույշ, չփշրես լանջապանիս զրահի դեմ…

… Աստվածացնում իր միսին, փոթորկումներն պարին,

Եվ առջի հեղ ըլլալով ապառաժ մարդն այդ լացավ…

Արտակարգ նրբությամբ ու քնքշությամբ է հեղինակը կերտել Նազենիկի կերպարը: Գեղեցկությունն ու վայելքը քանդակվում են նրա կերպարում: Իր բանաստեղծական ձիրքը թաթախելով բաբախուն հույզերի մեջ՝ Վարուժանը կերտել է երկնային մի խորհրդանիշ՝ Աստղիկ աստվածուհուն հավասար մեկին՝ Նազենիկին, որը նազելագեղ անունով է հայտնի:

Իր արտաքին գեղեցկությամբ նա հիշեցնում է գեղաքանդակ մի արձան, որ մարմնի բյուր ձևերով կենդանություն է ստանում մրրկաշունչ պարի մեջ. …

Հարճ - կին, որ պահում էին թագավորները, բարձրաստիճան կամ հարուստ տղամարդիկ՝ իրենց օրինական կնոջ կամ կանանց հետ միաժամանակ: Հարճությունը դիտվում էր որպես նվաստ վիճակ: Հարճից ծնված երեխան համարվում էր ապօրինածին և զուրկ էր ժառանգական իրավունքից:

<u>Քայլ 3.</u> Պոեմից դուրս գրել Նազենիկի գեղեցկությունն ու կանացիությունը նկարագրող տողեր

Վարձակն էր ան, Նազենիկ նազելագեղ անունով:

Հասակն ամբողջ կթրթռար բարտիի պես հողմախռով.

Դաշներգը իր ջիղերուն դաշներգին հետ լարերուն

Կմիանար, կսփռեր համանվագ մը հարաճուն…

Հապա նրա պարը.
Ան կճախրե, կճախրե, կատաղորեն կճախրե...
Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,
Կերթան փրփրիլ հատակին, հոն կազմելով ոսկի ծով...

Պոեմի խորհրդանշանակ ավարտը Վարուժանի մտահղացումն է.

Առևանգելով հմայիչ վարձակին՝ Տրդատը փրկում է գեղեցկությունը ստորացումից ու անարգանքից: Սակայն Բակուրի նետից մեռնում է Նազենիկը: Եվ երբ Տրդատը ձիուց իջեցնում է նրա անկենդան մարմինը, թվում է, թե վարձակի սրտի հետ դադարել է տրոփելուց նաև տիեզերքի սիրտը:

Բարտի մը կար հինավուրց՝ զոր ձեռքերովն իր բարի

Իջևանին քով տընկեր էր Դիցանույշ մ'անտառի.

Սակայն այդ օրն ոստ առ ոստ ան կը չորնար տրտմորեն

Տերևներն իր դալկահար հողին վրա ողբալեն:

Ու Տըրդատի հրամանով անոր բունին ճիշտ ներքև

Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.:

Իջևանի քով տնկված վաղընջական այն բարտին

Վերընձյուղում մ'ըստացավ՝ բուժելով վերքն իր սրտին՝

Երբոր Հարճին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ

Թաթախվեցան հողին տակ արմատներն իր խորդուբորդ,

Եվ ըսվեցավ թե անոր տերևուտքին մեջ դողդոջ

Չընքնաղ հոգին վարձակին բընակեցավ դար մ'ամբողջ,

Հարց. Նազենիկի մահով բանաստեղծն արդյո՞ք նպատակ է ունեցել ցույց տալ սիրո կործանումը:

Հիմնավորում. Նազենիկի մահով Վարուժանը ընդվզում է, իր բողոքն է արտահայտում աշխարհի անմարդկային օրենքների դեմ: Նազենիկը Գեղեցիկի ու սիրո խորհրդանիշն է, իսկ սերը երբեք չի մեռնում, այն հավերժ է, ինչպես վերընձյուղված բարդին:

Նազենիկի ամփոփ նկարագիրը. Նազենիկը հարճ է, երբեք ազատություն չի տեսել: Այդ իսկ պատճառով նա կանխազգում էր իր կարճատև ազատության վախճանը՝ նույնիսկ Տրդատի գրկում գտնվելիս:

Պոեմում բանաստեղծի իդեալի հակադիր բևեռը Բակուր նահապետն է՝ իր շրջապատով:

<u>Քայլ 4</u>. Պոեմից դուրս գրել Բակուրի դաժանությունը նկարագրող տողեր

Ամեն մարդ հոն թափվելիք արյան մը հոտը կը զգար...

Նահապետն ա՛լ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար.

Գնաց որ հարճն ազատե, ջախջախե գըլուխ Ասպետին՝

Որ կինն իր տան մեջ կը լլկեր՝ իբր իր ողկույզ տաշտին:

–«Այս հարկին տակ, ո՛վ ասպետ, ա՛լ բաժինս է գան ու ծեծ

Դուն որ գիտցար զիս վտանգել, ազատե արդ շուտափույթ,

Երբ ես հոժար խըմեցի ձեռքեդ գինին քու սիրույդ՝

Հարկ է ասկե վերջ խըմեմ Բակուրի թույնն ոխության.

Դուն հոս արյուն թափեցիր, և պիտի ե՛ս քավեմ զայն:

- Բակուր մեջտեղն էր անոնց՝

աշտանակած ահեղ ձին,

Կուգար լուծել իշխանեն վրեժ,

Պատժել հարճն անխիղճ…

Հարց. Ունենալով շքեղ ապարանք մի՞թե Բակուրը չէր գնահատում գեղեցիկը:

Հիմնավորում. Հեթանոս կենցաղի շռայլ զեխությունը նրանց էության արտաքին կեղևն է, իսկ Գեղեցիկը՝ Բակուրի բռնակալ կրքերի ու շրջապատի սանձարձակ հաճույքների զոհը:

Բակուրի ամփոփ նկարագիրը. Բակուրի կերպարով Վարուժանը ցույց է տվել հասարակության կեղծիքն ու սուտը, բարոյական անկումը, մարդկային արժեքների կորուստը:

Դաս 3. «Հարճը» պոեմի ամփոփումը

Նպատակը.

- Զարգացնել ստեղծագործության գեղարվեստական արժանիքները բացահայտելու կարողությունը,
- խորացնել և ընդլայնել գեղեցիկի և զորության մասին ունեցած պատկերացումները:

Վերջնարդյունքը.

- համադրել, ընդհանրացնել ստացած գիտելիքները,
- ինքնուրույն բացահայտել ստեղծագործության գեղարվեստական արժեքը:

<u>Քայլ 1.</u> Պոեմի կերպարների ճիշտ և բազմակողմանի բնութագրման, սովորողի վերլուծական-քննական մտածողությունը զարգացնելու նպատակով առաջադրել քննարկում և բանավեճ՝ հետևյալ հարցադրումների միջոցով.

- Մեկնաբանել, թե ինչպես է Վարուժանը «Հարճը» պոեմում աստիճանական զարգացմամբ հարստացնում Տրդատի կերպարը՝ ընդհուպ մինչև Նազենիկի մահվան տեսարանը:
- Մեկնաբանել Վարուժանի «Հարճը» պոեմում ասպետական կենցաղին ձոնված քնարական շեղումը՝ բացահայտելով, թե ինչպես է այն կապվում պոեմի գաղափարի հետ:
- Արդյո՞ք Տրդատի կերպարով Վարուժանը ցանկացել է քննադատել 20-րդ դարի մարդկային կեղծ հարաբերությունները:
- Համաձա՞յն եք այն գաղափարի հետ, որ Վարուժանի «Հարճը» և Թումանյանի «Անուշ»-ի գաղափարն այն է, որ մարդը և զգացմունքը չեն մեռնում, այլ հավերժանում են բնության մեջ, ինչպես վերընձյուղված բարդին, որի տակ Տրդատն ամփոփեց իր սիրելի կնոջը:
- Բացատրել հետևյալ խոսքերի իմաստը.

«Արշալույսին թող մեկնիմ արշալույսն այս գրկիս մեջ»,

«Առյուծներու քաջության և ոչ ոսկի հորթերուն»,

«Էգ վագրին հոտն ըմբոշխնել արու վագրին է տրված»:

<u>Քայլ 2.</u> Գտնել գաղափարական նմանություններ այլ ստեղծագործությունների հետ



<u>Քայլ 3</u> Լրացնել տրված ելքի քարտերը





Թեմայի ամփոփման համար սովորողներին ուղարկել ենք էլեկտրոնային հարցում՝ թեմայի վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները ստուգելու համար: Հարցմանը մասնակցել է 17 աշակերտ:

https://forms.gle/p19q8BJV21LrzUnB6

Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքների տվյալների աղյուսակները:

Ո՞ր պատմիչն է անդրադարձել Տրդատին իր պատմության մեջ:
17 responses

Վարուժանի «Հարճը» պոեմը ո՞ր ժողովածուում է զետեղված:
17 responses



Համաձա՞յն եք այն տեսակետի հետ, որ Վարուժանի «Հարճը» և Թումանյանի «Անուշ» պոեմների գաղափարն այն է, որ մարդը և զգացմունքը չեն մեռնում, այլ հավերժանում են բնության մեջ:

17 responses



Համաձա՞յն եք, որ Նազենիկի և Տրդատի կերպարների նկարագրությունը համապատասխանում է ժամանակակից Ուժի և Գեղեցկության մարմնավորման չափանիշներին:

17 responses



«Հարճը» պոեմը աչքի է ընկնում… կարող եք ընտրել ինչպես 1, այնպես էլ՝ մեկից ավելի տարբերակ

17 responses



Տրդատի կերպարով Վարուժանը ցանկացել է քննադատել 20-րդ դարի մարդկային կեղծ հարաբերությունները:

17 responses



Որքանո՞վ է ճիշտ Նազենիկի կերպարի հետևյալ մեկնաբանությունը. Նազենիկը վաղնջական ժամանակների կին է, հարճ և ունի ստրկական կնոջ հոգեբանություն:

17 responses



Ամփոփում

Պոեմում արծարծված գաղափարները արդիական են նաև այսօր, քանի որ ինչքան հին է պոեմն իր պատմական հիմքով և ներկայացված ժամանակով, այնքան մոտ է մեր իրականությանը: Պոեմի ուսուցումն աշակերտներին հնարավորություն տվեց գնահատելու այն արժեքները, որոնք բոլոր ժամանակներում անհրաժեշտ են մարդուն՝ պահելու իր տեսակը՝ իր հոգու և մարմնի գեղեցկությունը, չաղճատել այն ամենը, ինչը նրան դարձնում է կատարյալ:

«Հարճը» պոեմի ուսուցման ընթացքում կիրառված բոլոր գործիքները հնարավորություն տվեցին ինձ հասնել աշխատանքի վերջնարդյունքին, այն է՝ պոեմի բովանդակության և կերպարների վերլուծության միջոցով սովորողների մոտ զարգացնել ազգային արժեհամակարգի ամենաբարձր դրսևորումները՝ վեհանձնություն, պատվախնդրություն, քաջություն, գեղեցիկը գնահատելու և արժևորելու կարողություն:

Ուսուցման ընթացքում սովորողները նաև այլ ստեղծագործությունների հետ զուգահեռներ տարան, համեմատեցին ու գտան գաղափարական նմանություններ:

Իսկ ներկայացված օրինակելի դասի վերջում արդյունավետ և որակյալ հետադարձ կապ ստանալու համար սովորողներին տրվել է պատկերավոր և գրավիչ դիզայնով ելքի քարտեր, կատարվել է ամփոփիչ հարցում՝ ստուգելու, թե պոեմի գաղափարը որքանով էր հասկանալի նրանց:

Արդյունքում տրվեց ամփոփ պատասխան. «Մարդը և նրա զգացմունքը չեն մեռնում, այլ հավերժանում են բնության մեջ՝ հավերժացնելով և նրան»:

Պոեմը վեհի, ուժի ու գեղեցկության գովքն է: Պոեմի բոլոր կերպարները ոգով ապրելու իրենց եղանակով օրինակելի են: Հակադրվելով ժամանակակից մարդու փոքրությանը՝ բանաստեղծը փառաբանում է լիարժեք կյանքը, առողջ ու գեղեցիկ մարմինը, հզոր ու անկեղծ մարդու ազատ կամքը, խիզախությունն ու ուժը: Պոեմը

ձոն է՝ նվիրված ասպետականությանը, զորությանն ու գեղեցկությանը, անկեղծ ու մաքուր սիրուն:

Համամարդկային գաղափարներով տոգորված այս գեղեցիկ կոթողը կնպաստի բարոյական ու ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերնդի դաստիարակմանը, ազգային, բարոյական ու հոգևոր արժեքների պահպանմանն ու փոխանցմանը: Արժեքներ, որոնց կրողը պետք է լինի նաև քսանմեկերորդ դարի մարդը:

Գրականության ցանկ

1. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1961թ.
2. Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1986թ.
3. Ս. Աղաբաբյան, դասականներ և ժամանակակիցներ,Երևան 1986թ.
4. Հայ գրականություն, ուսուցչի ձեռնարկ,Երևան 2009թ.,
5. Զ. Գրիգորյան, Արևմտահայ գրողները դպրոցական դասընթացում,Երևան, 1985թ.
6. Վ. Կիրակոսյան, Զ. Ավետիսյան, Հայ գրականություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի համար, Երևան 2022թ.

Հավելված 1

Օրվա դասի պլան

Հայ գրականություն

11-րդ դասարան

Դասի թեման- Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի պատմական հիմքը, կերպարների առանձնահատկությունները **(** 3 դասաժամ **)**

Դասի նպատակը՝

- Սովորողներին ծանոթացնել պոեմի պատմական հիմքին, քնարական շեղումներին,
- խթանել սովորողների վերլուծական-քննական մտածողությունը,
- զարգացնել կերպարների միջև զուգահեռներ տանելու հմտությունը,
- սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը:

Դասի վերջնարդյունքը՝

- Կներկայացնի հեթանոսական - ասպետական դարերին բնորոշ ուժի, գեղեցկության, ոգու, վայելքի մեծարանքը
- կարտահայտի ինքնուրույն դատողություններ բարձրացրած հարցերի շուրջ
- կերպարների հանդեպ կձևավորի անհատական վերաբերմունք,
- կդրսևորի հարգանք ազգային արժեքների նկատմամբ:

Առաջարկվող գործունեության ձևեր՝

- Ստեղծագործության ժամանակագրական քարտեզ
- Ժամանակաշրջանը, միջավայրը

- ➢ Գաղափարական հարցադրումներ
- ➢ Վերլուծել գրական կերպարը
- ➢ Ցույց տալ արդիականությունը
- ➢ Առանձնացնել կերպարների բնութագրերը:
- ➢ Կազմել բանավիճային հարցեր, քննարկումներ

Խաչվող հասկացություններ՝

Պատճառ և հետևանք

- դիպաշարի գրական կերպարի զարգացում:

Անհատական և մշակութային արժեհամակարգ

- գրողի կիրառած բառապաշարը, հերոսների խոսքը, պատկերավորման միջոցները

Ժամանակ և տարածություն

- ստեղծագործության մեջ պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:

Անհատ և հարաբերություն

- Երկում արտահայտված հույզերը, զգացմունքները, կոնֆլիկտը:

Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ՝

Մ1- Գրական հայերենով ստեղծի գրավոր և բանավոր խոսք

Մ3- համադրի և վերլուծի գրական տարբեր կերպարներ

Մ16- համեմատի և վերլուծի հասարակական և քաղաքական

երևույթների տարբեր մեկնաբանություններ

Մ23- ցուցաբերի հարգանք և անաչառ մոտեցում ավանդույթների

նկատմամբ՝ դիտարկելով դրանք մարդու իրավունքների

նկատմամբ հարգանքի տեսանկյունից

Մ38 - ճանաչի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում, խմբում, հասարակության մեջ

Օգտագործված նյութերը. Հայ գրականության 11-րդ դասարանի հանրակրթական դասագիրք, Դ. Վարուժանի երկերի ժողովածու, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկը, բառարան

Կիրառված մեթոդները. ԳՈՒՍ, հարցադրումների մեթոդ, Վեննի դիագրամ, հակադրություններ և նմանություններ, քննարկումներ, ելքի քարտեր:

Ընթացքը՝

- ԳՈՒՍ մեթոդով պարզել աշակերտների իմացությունը հեթանոսական ժամանակաշրջանի, մրջավայրի, հեթանոս աստվածների մասին:
- Ընթերցել Խորենացու «Հայոց պատմություն»-ից համապատասխան հատվածը, նշել քնարական շեղումները:

Խմբային աշխատանք՝

- Համեմատություններ և հակադրություններ մեթոդով բնութագրել Խորենացու և Վարուժանի Տրդատին, օգտագործել Վեննի դիագրամ:
- Պոեմից դուրս գրել հեթանոսական-ասպետական դարերին բնորոշ ուժի,գեղեցկության, ոգու, վայելքի մեծարանքը փառաբանող հատվածները: Բառարանի օգնությամբ գտնել անծանոթ բառերի բացատրությունը:
- Բնութագրել գլխավոր հերոսներին՝ Տրդատին, Նազենիկին, Բակուրին, Տրդատի՝ Նազենիկի նկատմամբ ունեցած ջերմ սիրո, քնքշանքի, Բակուր իշխանի բռնակալ կրքերի, անարգանքի և նրա շրջապատի վախկոտության դրվագները:
- Հարցադրումների և հիմնավորումների միջոցով տալ կերպարների ամփոփ բնութագիրը:

Ամփոփում՝

- Պոեմի կերպարների ճիշտ և բազմակողմանի բնութագրման , վերլուծական-քննական մտածողության զարգացման նպատակով առաջադրել քննարկում.
- Տրդատի կերպարով արդյո՞ք Վարուժանը ցանկացել է քննադատել 20-րդ դարի մարդկային կեղծ հարաբերությունները:
- Համաձա՞յն եք այն գաղափարի հետ, որ Վարուժանի «Հարճը» և Թումանյանի «Անուշ»-ի գաղափարն այն է, որ մարդը և զգացմունքը չեն մեռնում, այլ հավերժանում են բնության մեջ, ինչպես վերընձյուղված բարդին, որի տակ Տրդատն ամփոփեց իր սիրելի կնոջը:
- Գտնել գաղափարական նմանություններ այլ ստեղծագործությունների հետ:

Լրացնել ելքի քարտերը.

- Ինչպե՞ս կարող եմ այսօրվա դասը կապել իրական կյանքի հետ:
- Որքա՞ն լավ ես հասկացել այսօրվա դասը:

Գնահատում- ձևավորող գնահատում

Տնային առաջադրանք- Միջառարկայական կապ.

- Հայոց պատմությունից՝ դուրս բերել Տիրան թագավորի, Տրդատ Բագրատունու,Բակուր իշխանի մասին տեղեկություններ,
- աշխարհագրությունից ՝ գտնել պոեմում հանդիպած տեղանունների մասին տեղեկություններ (Մարաստան, Սպեր, Սյունիք)
- մշակույթ՝ երաժշտության, պարի, հագուստի, այլ իրերի նկարագրությունը համեմատել ժամանակակից երաժշտության և իրերի հետ: